ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 11-Ա

«16» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/51» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ՝ «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (Այսուհետև՝ ՔԿ ծառայություն) բոլոր քրեակատարողական հիմնարկների կարիքների համար 2025թ.-ի ընթացքում շինարարական նյութերի ձեռք բերման նպատակով, ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով՝ 26.08.2025թ.-ին հայտարարվել է ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/51» ծածկագրով գնման ընթացակարգ: «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/51» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 08.09.2025թ-ին ժամը 11:00-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել է 09.09.2025թ.-ին ժամը 11:00-ն: Նշված գնման ընթացակարգի NN 1,2 չափաբաժիններին մասնակցել են թվով 5 մասնակիցներ, այդ թվում՝ «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/51» ծածկագրով գնման ընթացակարգի NN 1,2 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած Մասնակից «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ դիմում-հայտարարությունում բացակայել է հրավերի 4.3

կետի 1-ին մասի ե/ ենթակետով սահմանված հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություններ պարունակող կայք էջի հղումը, էլեկտրոնային ստորագրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիրը լրացված չի եղել:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տրվել է շտկման հնարավորություն, սակայն «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել վերը նշված անհամապատասխանությունը, ուստի հանձնաժողովը որոշում է կայացրել «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետի, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/51» ծածկագրով գնման ընթացակարգը չունի հայտի ապահովման ներկայացման պահանջ, ուստի «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին՝ «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմքը	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
Ծածկագիրը	Չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	Համարը	Անվանումը	Գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁ Բ-25/51»	1	Ցեմենտ	1487200	«ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	42117958	Ք. Երևան, Շեվչենկոյի փողոց 1/14	11.09.2025թ.	ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	
	2	Ավազ	613200							

ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ